

ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/2

4 հունիսի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Աղասի Ոսկանյանի 30.04.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ 15.04.2014 թ-ի թիվ 1108997 ստուգման ակտի դեմ:

Ա/Ձ Աղասի Ոսկանյանի գանգատում բերված փաստարկները.

Գանգատարկման առարկան 15.04.2014 թ-ին կազմված թիվ 1108997 ակտն է, որը կազմված է ապօրինի կերպով, ինչը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով.

1. 24.03.2014 թ-ին ոմն անձնավորություն (տղամարդ), մտնելով Չարենց 43 հասցեում գտնվող վաճառատան, հարցրել է, թե կա արդյոք «շարժիչի գոտի», սակայն այդ պահին տվյալ դետալը խանութում չի եղել: Աշխատակիցը ասել է, որ պետք է սպասել մեկ ժամ և ավելացրել, որ ապրանքը պահեստից խանութ բերվելուց հետո միայն պարզ կլինի, թե այդ պահեստամասը «գնորդի» պահանջած պահեստամասն է, թե ոչ: Սակայն «գնորդը» թողել է գումարը պատճառաբանելով, որ իրեն այդպես հարմար է և հեռացել: Հսկիչ գնում կատարած տղամարդը գումարը փոխանցել է աշխատակցին գոյություն չունեցող պարտավորության համար, որը չի կարող դիտվել ոչ որպես վճարում ապրանքի դիմաց, ոչ տրված կանխավճար ապրանք ձեռք բերելու համար: Հետևաբար, աշխատակիցը ՀԴՄ կտրոն տպելու և տրամադրելու պարտականություն չի ունեցել:

2. Այնուհետև, նախատեսված մեկ ժամից շուտ խանութ է մտել հարկային տեսուչ Արամ Ազարյանը և ասել, որ տեղի է ունեցել հսկիչ գնում: Քիչ անց խանութ է մտել նաև հարկային տեսուչ Գարիկ Խաչատրյանը և ծանոթացրել հանձնարագրի հետ: Պահանջվել է, որ խանութ վերադառնա նաև աշխատակցին գումար փոխանցած անձը և պատմի դեպքը, սակայն նրանք հրաժարվել են կանչել այդ անձին: Քանի որ ճանաչել են հարկային տեսուչ Արամ Ազարյանին և Գարիկ Խաչատրյանին, իսկ նախկին հսկիչ գնումից ճանաչում էին նաև Գևորգ Բրուտյանին, կարող են վստահ ասել, որ «հսկիչ գնում» կատարած անձը ներառված չէր հանձնարարագրում, ինչը նույնպես խախտում է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ Օրենքը:

3. Համաձայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, հանձնարարագրի ներկայացման օրը պետք է կազմվեր արձանագրություն, որը տնտեսվարող սուբյեկտի կողմից ստորագրելուց կամ ստանալուց հրաժարվելու դեպքում այն պետք է ուղարկվեր փոստով, ինչը տեղի չի ունեցել: Չի տրամադրվել արձանագրությունը ոչ առձեռն և ոչ էլ փոստով:

4. Համաձայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերության, ստուգման ակտը երեք աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով պետք է ներկայացվեր առձեռն կամ ուղարկվեր փոստով, այնինչ ակտը ստացվել է 29.04.2014 թ-ին առձեռն՝ հարկային տեսչություն այցելելով, մինչդեռ ակտը կազմվել է 15.04.2014 թ-ին:

Համաձայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի բողոքարկվում է 15.04.2014 թ-ին կազմված թիվ 108997 ակտը և խնդրվում է այն համարել անվավեր:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 04.03.2014 թ-ի թիվ 2221802 հանձնարարագրի Ա/Ձ Աղասի Ոսկանյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 24.03.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2221802 արձանագրությունը, որում մանավորապես նշվել է.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 04.03.2014 թ-ի թիվ 2221802 հանձնարարագրում ընդգրկված քաղ. Հայկ Դավթյանը 24.03.2014 թ-ին ժամը 13:25-ին ք.Երևան, Չարենցի 43 հասցեում գործող Ա/Ձ Աղասի Ոսկանյանին պատկանող ավտոպահեստամասերի մանրաձախ առևտրի կետից կատարեց հսկիչ գնում 8000 դրամ արժողությամբ (1 հատ ամտոմեքենայի շարժիչի փոկ): Տվյալ ապրանքատեսակը խանութում չլինելու պատճառով պայմանավորվածություն ձեռք բերվեց ապրանքը տրամադրել կես ժամից, որի դիմաց վճարված կանխավճարը՝ կանխիկ գումարով, չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Այնուհետև, ժամը 13:28-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց Z հաշվետվություն, որում հասույթը կազմում էր 0 դրամ: Տեսուչների պահանջով չմուտքագրված գումարը՝ 8000 դրամը, ժամը 13:38-ին մուտքագրվել է ՀԴՄ, ժամը 13:38-ին նորից դուրս է բերվել Z հաշվետվություն 8000 դրամ հասույթով: Վճարված գումարը Ա/Ձ Աղասի Ոսկանյանը հրաժարվել է հետ վերադարձնել:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ա/Ձ Աղասի Ոսկանյանը խախտել է ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահը 26.03.2014 թ-ին հրապարակել է թիվ 1108997 հանձնարարագիրը հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ստուգում կատարելու վերաբերյալ: Ստուգման արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ 15.04.2014 թ-ի թիվ 1108997 ստուգման ակտը, որով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին, որ 24.03.2014 թ-ին ժամը 13:25-ին քաղաքացի Հայկ Դավթյանը, որը ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 21.03.2014 թ-ի թիվ 24 հրամանով ընդգրկվել է Էրեբունու ՀՏ պետի 04.03.2014 թ-ի թիվ 2221802 հանձնարարագրում, ք.Երևան, Չարենցի 43 հասցեում գործող Ա/Ձ Աղասի Ոսկանյանին պատկանող ավտոպահեստամասերի մանրաձախ առևտրի կետից կատարել է հսկիչ գնում 8000 դրամ արժողությամբ (1 հատ ամտոմեքենայի շարժիչի փոկ): Մասնավորապես, նշված ապրանքատեսակը խանութում առկա չլինելու պատճառով պայմանավորվածություն է ձեռք բերվել ապրանքը տրամադրել կես ժամից, որի դիմաց Հայկ Դավթյանի կողմից վճարվել է կանխավճար՝ կանխիկ գումարով, որը սակայն, չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել:

Կատարված պատվերի դիմաց վերոգրյալ գնորդի կողմից գումար վճարելու և այն խանութի աշխատակցի կողմից վերցնելու փաստն ընդունեցին նաև նիստին ներկա գտնվող Ա/Ձ Աղասի Ոսկանյանի ներկայացուցիչները: Վերջիններիս պնդմամբ կատարված պատվերի դիմաց գնորդի վճարած գումարը չի կարող դիտվել որպես կանխավճար, քանի որ հայտնի չէր, թե պատվիրված ապրանքը բերելուց հետո այն ձեռք կբերվի գնորդի կողմի, թե ոչ:

Հանձնաժողովի համոզմամբ, քննարկվող դեպքում պատվիրված ապրանքի դիմաց հաճախորդի վճարած գումարը հանդիսանում է կանխավճար, որը պետք է մուտքագրվեր ՀԴՄ և տրամադրվեր համապատասխան գումարի կտրոն: Իսկ այն դեպքում, երբ հաճախորդը հրաժարվեր պարվիրված ապրանքը ձեռքբերելուց, գումարը վերադարձնելուց հետո ՀԴՄ-ով կարող էր կատարվել գումարի վերադարձի ձևակերպում:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հայաստանի

Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի»:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Աղասի Ոսկանյանի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված պատասխանատվության միջոցը:

Գանգատում բերված այն պնդման վերաբերյալ, որ Ա/Ձ Աղասի Ոսկանյանին չի տրամադրվել հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2221802 արձանագրությունը, նշվեց, որ այն չի համապատասխանում իրականությանը, քանի որ նշված արձանագրության «Ստացա արձանագրության մեկ օրինակը» մասում կատարված Ա/Ձ Աղասի Ոսկանյան նշագրումից հետո դրված է վերջինիս ստորագրությունը:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված հաջորդ պնդմանը, որ սահմանված ժամկետում Ա/Ձ Աղասի Ոսկանյանին չի ներկայացվել ստուգման ակտի օրինակը, ապա նշվեց, որ այն նույնպես չի համապատասխանում իրականությանը: Ստուգման ակտի օրինակը սահմանված ժամկետում Ա/Ձ Աղասի Ոսկանյանին ուղարկվել է փոստային ծառայության միջոցով և ակտը ուշ ստանալը պայմանավորված է եղել փոստային ծառայությունում տեղ գտած խնդիրներով: Նշված հանգամանքը ընդունվեց նաև Ա/Ձ Աղասի Ոսկանյանի ներկայացուցիչների կողմից:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձնակազմի անդամը ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ